«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝

«Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcararatarmenia.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10.10.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝	ՊԼ-006
Խախտում՝	1. Դաշտի տեր երկրպագուների կողմից վիրավորական արտահայտություն պարունակող պաստառի օգտագործումը 2. Դաշտի տեր երկրպագուների կողմից հրավառ նյութեր օգտագործելը (Հավելված 1 Ա, 25-րդ կետ) 3. Հյուր թիմի երկրպագուների կողմից հրավառ նյութեր օգտագործելը (Հավելված 1 Ա, 25-րդ կետ)
Առաջնություն՝	Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգա
Խաղ՝	«Արարատ-Արմենիա»-«Փյունիկ», 03.10.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը և 21-րդ հոդվածի 2-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100,000 ՀՀ դրամի չափով:
2. Ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 21-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով նույն կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ դաշտի տեր երկրպագուների կողմից հրավառ նյութեր օգտագործելու համար և հյուր թիմի երկրպագուների կողմից հրավառ նյութեր օգտագործելու համար «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի իննսունապատիկի՝ 90,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։